գելք հանդիսացաւ Թորոսովիչի ձեռնադրութեան։ Այն ժամանակ, Մելքիսէթը, 1627 թ. Յունուարին, գիշերը, գաղտնի կերպով կատարեց Թորոսովիչի ձեռնադրութեան արարողութիւնը, քաղաքից դուրս գտնուող վանքում, իսկ յետոյ, Լվովի հայերի բուռն բողոքների վրայ, յանձն առաւ Թորոսովիչին պաշտօն չտալ Լեհաստանում, այլ ուղարկել Հայաստան։

Ձեռնադրութիւնից յետոյ անմիջապէս, Մելքիսէթը Թորոսովիչի հետ միասին մեկնեց Կամենեց։ Եւ ճանապարհից Թորոսովիչին վերադարձրեց Լվով՝ տալով նրան մի գրութիւն յանուն Լվովի հայերի, որով, բանադրանքի սպառնալիքի տակ, պահանջում էր Թորոսովիչին ճանաչել Լվովի եւ բովանդակ Լեհաստանի եպիսկոպոս եւ ենթարկուել նրան։

Կամենեց հասնելուց յետոյ, Մելքիսէթ չուտով վախճանուեց (1627 թ. Մարտ 18), ուր եւ տեղի ունեցաւ թաղումը։

Լվովի հայ համայնքը, Մելքիսէթի խիստ հրամանի վրայ, թէեւ ծայրայեղ յուզումով ու չկամութեամբ, ճանաչեց Թորոսովիչին եպիսկոպոս։ Բայց առաջին իսկ պատեհ առիթով, երբ Թորոսովիչը ընդհարում ունեցաւ Մովսէս կաթուղիկոսի նուիրակ Գրիգոր վարդ. Կեսարացու հետ եւ այս վերջինը բանադրեց Թորոսովիչին, Լվովի հայերը վակեցին Թորոսովիչի առջեւ իրենց եկեղեցիների դռները եւ մերժեցին ճանաչել նրան իրենց եպիսկոպոս։

Թորոսովիչը հարկադրուած եղաւ ճամբորդութիւն կատարել դէպի Արեւելք եւ խնդրել Գրիգոր վարդապետից՝ վերացնել բանադրանքը։ Եւ հասաւ իր նպատակին՝ խաբելով Գրիգոր Վարդապետին։ Թորոսովիչը վերադարձաւ Լվով եւ իբրեւ թողութիւն ստացած՝ նորից ընդունուեց իր հօտի կողմից։ Բայց յետոյ, Թորոսովիչի խաբած լինելը իմանալուց յետոյ, Գրիգոր վարդ. նորից բանադրեց նրան, եւ նորից Թորոսովիչի առջեւ փակուեցին հայոց եկեղեցիների դռները։

Այս ձեւով չարունակուեց հակառակութիւնը Թորոսովիչի եւ իր հօտի միջեւ։ Ձնայած հայերի թափած ջանքերի, Թորոսովիչին յաջողուեց իր եպիսկոպոսական պաշտօնի վերացումը ստանալ Սիգիզմունդ Գ. թագաւորից (1629 թ. Մայիս 6)։

Սակայն, այս էլ չհանգստացրեց Լվովի հայ համայնքը։ 1630 թ. Հոկտեմբերին, Թորոսովիչը իրեն համար գտաւ շատ հեշտ ելք ստեղծուած դրութիւնից։ 1630 թ. Հոկտեմբեր 24-ին, ներկայացաւ Կարմելիտների վանքը եւ հանդիսաւորապէս արտասանեց կաթոլիկական հաւատոյ հանգանակը։

Այժմ Թորոսովիչի եւ իր հօտի դերերը փոխուեցին։ Թորոսովիչին օգնում էին եզուիտները, բոլոր լեհ իշխանութիւնները՝ քաղաքային թէ համապետական, եւ հէնց ինքը Սիգիզմունդ Գ. թագաւորը, որ ջերմ կուսակից էր հայ եւ կաթոլիկ եկեղեցիների միութեան։

Յաջորդ օրը Թորոսովիչը քաղաքային իշխանութիւնների կողմից, զինուորների ուղեկցութեամբ, մեծ հանդէսներով առաջնորդուեց հայոց մայր եկեղեցին, որի դռները կոտրուեցին եւ Թորոսովիչին յանձնուեց թեմի իշխանութիւնը։

Սկսուեց բուռն եւ երկարատեւ պայքար հայ համայնքի կողմից ընդդէմ իրենց եպիսկոպոսի։

Հայերը յամառ կերպով հրաժարւում էին Թորոսովիչի ձեռքն անցած մայր տաճարը այցելելուց եւ օգտւում էին իրենց թողնուած միւս երկու եկեղեցիներից։ Թորոսովիչը, աշխարհիկ իշխանութեան օգնութեամբ, այդ եկեղեցիներն էլ խլեց նրանցից։ Այն ժամանակ հայերը չունեցին իրենց համար տնային մի եկեղեցի եւ այնտեղ էին կատարում աստուածապաշտութիւնը, ի բաց չառնելով եւ յուղարկաւորութիւնը։ Թորոսովիչը խլեց այդ եկեղեցին էլ, եւ հայերը ստիպուած եղան պսակի արարողութիւն կատարելու համար գնալ հարեւան քաղաքները, որոնց Թորոսովիչ ձեռք չէր տուել, իսկ ննջեցեալներին՝ դագաղները ճիւթ լեցնելով՝ պահում էին ամխներով, որպէսզի յարմար առթիւ դագտագողի քաղաքից դուրս տանեն եւ հողին յանձնեն։

Թորոսովիչին նեցուկ էին հանդիսանում լատին հոգեւորականութիւնը, աշխարհիկ ու քաղաքային իշխանութիւնները եւ Սիգիզմունդ Գ. թագաւորը (1587–1639), որը Պրուխնիցկի արքեպիսկոպոսի միջոցով հրաման արձակեց՝